600.0089.12.04.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի 2019 թվականի №89Ա
ք.Երևան

«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2019 թվականի մարտի 5-ի №308-19 և, ի լրումն՝ մարտի 14-ի №350-19 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ սեփականության իրավունքով Ընկերությանը պատկանող Արցախի փողոցի 4-րդ նրբանցքի №14 հասցեի 12 հա մակերեսով անշարժ գույքից 3 հա մակերեսով հողամասը (այսուհետ՝ Գույք) «Արմփաուեր» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալության իրավունքով տրամադրելուն (այսուհետ՝ Գործարք),

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով, 2019 թվականի մարտի 18-ի №ՄՍ/2.2-21/404-19 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ Գործարքի վերաբերյալ կառավարության դիրքորոշումն ստանալու նպատակով,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի սույն թվականի ապրիլի 3-ի №02/16.10/15672-2019 գրությամբ ներկայացվել են Հայաստանի Հանրապետության վարչապետի սույն թվականի մարտի 25-ի №02/16.10/13722-19 հանձնարարականով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածների և բնական պաշարների, Հայաստանի Հանրապետության արդարադատության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունների, Հայաստանի Հանրապետության

ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական կոմիտեի ներկայացրած դիրքորոշումները՝ Գործարքի մասով առարկություններ չունենալու վերաբերյալ,

դ) Հանձնաժողովի կողմից Գործարքին համաձայնություն տալը, համաձայն «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, չի վնասում ազգային անվտանգությունը և պետական շահերը, իսկ ձեռքբերողի՝ որպես էլեկտրաէներգետիկական համակարգում լիցենզավորված գործունեություն իրականացնող և անհրաժեշտ փորձ ունեցող անձի վերաբերյալ դրույթը նշված գործարքների նկատմամբ կիրառելի չէ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերության Գույքը «Արմփաուեր» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալության իրավունքով տրամադրելուն:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝
   1) սույն որոշման 1-ին կետով նշված Գործարքը կնքելուց հետո անհրաժեշտ է երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել դրա վերաբերող բոլոր փաստաթղթերի պատճենները.
   2) իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք. Երևան
12 ապրիլի 2019թ.